

**Ուղղված է՝**

ՀՀ տարածքում գործող բոլոր բանկերին, վարկային կազմակերպություններին, ներդրումային ընկերություններին, ներդրումային ֆոնդերի կառավարիչներին

**Առարկան՝**

Հաշվային պլանի 814 ենթաբաժնի վերաբերյալ

Հարգելի տիկնայք և պարոնայք

Հաշվային պլանի ենթաբաժին 814-ի շրջանակներում հաշվառվող ապահովագրական պայմանագրերի հաշվառման վերաբերյալ հայտնում ենք հետևյալը՝

1-ին կարգի հաշիվ 8140-ում հաշվառվում են Կազմակերպության կողմից իր անունից կնքված ապահովագրական պայմանագրերը:

1-ին կարգի հաշիվ 8141-ում հաշվառվում են հաճախորդի կողմից իր անունից կամ Կազմակերպության կողմից հաճախորդի անունից կնքված այն ապահովագրական պայմանագրերը, համաձայն որոնց շահառուն հանդիսանում է Կազմակերպությունը:

Ենթաբաժին 814-ի բոլոր հաշիվների հաշվառումն իրականացվում է ապահովագրական պայմանագրերով սահմանված ապահովագրական գումարների չափով: Ֆրանշիզայի առկայությունը հաշվի չի առնվում:

Հաշվառման ենթակա են ինչպես նոր, այնպես էլ նախկինում կնքված պայմանագրերը:

Միևնույն ժամանակ հայտնում ենք, որ նախկինում կնքված պայմանագրերի վերաբերյալ տեղեկատվության ամփոփումը կարող է իրականացվել աստիճանաբար՝ մինչև սույն թվականի դեկտեմբերի 31 ավարտելու պայմանով:

Մհեր Աբրահամյան



Ֆինանսական համակարգի կարգավորման վարչության պետ

Սույն գրության հետ կապված հարցերով կարող եք դիմել  
Ֆինանսական համակարգի կարգավորման վարչություն  
Արմեն Ֆահրադյանին  
հեռախոս՝ 59-26-83